

# ՎՐԱՍՏԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ - ՔԱՂԱՔԱԿԱՆ ԹԵՐԹ
რესპუბლიკური საზოგადოებრივ-პოლიტიკური გაზეთი

«ვრასტანი» (საქართველო)

ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ
გაზეთი გამოდის 1920წ. დეკემბრიდან

№ 63 - 64 (17474) ՇԱԲԱԹ 22 ՕԳՈՍՏՈՍԻ 2026 Թ.
ԳԻՆԸ՝ 40 ԹԵՏՐԻ

**ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ**

## ԻՐԱԿԼԻ ԿՈԲԱԽԻՁԵ. «ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒՄ ԵՆ, ԲԱՐԵԿԱՄՆԵՐ ԵՆ, ԵՐԲ ԴԱ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է ԻՐԵՆՑ ՇԱՀԵՐԻՆ»

*Օգոստոսի 18-ին, կառավարության գրասենյակում անցկացրած ճեպասուլիսին, Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն հայտարարեց, որ յուրաքանչյուր պետություն գործում է իր ազգային շահերին համապատասխան, հետեւաբար, ոչ ոք չպետք է պատրանք ունենա, որ մեկ պետություն աշխատում է մյուսի օգտին եւ զոհաբերում է իր շահերը նրա օգտին, եւ սա այն իրականությունն է, որն ընկած է միջազգային քաղաքականության հիմքում՝ պետությունները բարեկամ եւ գործընկեր են այնտեղ եւ այն ժամանակ, երբ դա համապատասխանում է իրենց շահերին:*

- 2008 թվականի օգոստոսյան պատերազմի 18-ամյակի վերաբերյալ վերջերս արված մի շարք հայտարարություններ եւ գնահատականներ լուրջ քննարկումներ են առաջացրել հասարակության մեջ: Հատկապես ուշագրավ էին փորձերը՝ 2008 թվականի իրադարձությունների գնահատման հետ մեկտեղ, էրեկլե Երկրորդի պատմական որոշումները դիտարկել նաեւ այսօրվա քաղաքական եւ գաղափարախոսական դիրքերից,- հայտարարեց վարչապետն ու հավելեց, որ հենց այդ որոշմամբ էրեկլե Երկրորդը պահպանել է Վրաստանի պատմական գոյությունը եւ հետագա պետական զարգացումը, այդ թվում՝ եվրոպական տարածքին ինտեգրվելու հնարավորությունը:

- Հենց այս հայտարարությունների եւ դրանց շուրջ ծավալված քննարկման ֆոնին եմ անհրա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

## ՄԱԿ-Ի ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԱՋԱԿՑՈՒՄ Է ՎՐԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ

*ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը փակ նիստում, ռուս-վրացական պատերազմի 18-րդ տարելիցի հետ կապված, քննարկել է Ռուսաստանի կողմից բռնազավթված Վրաստանի տարածքներում տիրող իրավիճակը եւ ռուս-վրացական հակամարտության հարցը:*

Նիստի շրջանակում, Մերձավոր Արեւելքի, Եվրոպայի, Ամերիկայի, Ասիայի եւ Օվկիանիայի հարցերով ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի օգնական Մուհամեդ Խալեդ Խիարին զեկույց է ներկայացրել եւ Խորհրդի անդամներին թարմացված տեղեկատվություն է տրամադրել տեղում տիրող իրավիճակի եւ Ժնեւի միջազգային բանակցությունների գործընթացի մասին:

Նիստի ավարտին՝ ՁԼՄ-ների համար համատեղ հայտարարությամբ հանդես են եկել Անվտանգության խորհրդի անդամ երկրների՝ Միացյալ Թագավորության, Ֆրանսիայի, Լատվիայի, Դանիայի եւ Հունաստանի, ինչպես նաեւ Խորհրդի ապագա անդամ երկրների՝ Ավստրիայի եւ Պորտուգալիայի ներկայացուցիչները:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

**ՀՐԱՎԵՐ**

## ՖՐԱՆՍԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՎԵՐՈՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԿՄԱՍՆԱԿՑԻ ՓԱՐԻԶՈՒՄ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎԻՆ

*Եվրամիության հետ հարաբերությունների սրման պայմաններում Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի կողմից հրավիրվել է տիեզերական հարցերին նվիրված առաջին միջազգային գագաթնաժողովին, որը տեղի կունենա Փարիզում, սեպտեմբերի 9-10-ը:*

Ինչպես նշում է Ֆրանսիայի նախագահը, միջոցառումը համանախագահելու են Ֆրանսիան եւ Գերմանիան: Գագաթնաժողովի հիմնական թեմաներն են գիտությունը, հետազոտությունները, անվտանգությունը եւ պաշտպանությունը:

«Մեր պարտականությունն է այսօրվանից ապահովել տիեզերական գործունեության կայունությունը՝ մեր ընդհանուր բարեկեցության եւ ապագա սերունդների օգտին. այս գագաթնաժողովը թույլ կտա մեզ ամրապնդել այս ձգտումը:

Ես հույս դնում եմ Ձեր աջակցության վրա եւ անհամբեր սպասում եմ Ձեզ՝ Փարիզում հյուրընկալելու 2026 թվականի սեպտեմբերին: Պարոն վարչապետ, խնդրում եմ ընդունեք իմ խորին հարգանքների հավաստիքը»,- ասված է Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի պաշտոնական հրավերում:

**ՀԱՅԱՍՏԱՆ**

## ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՈՒՄԸ՝ ԿԱՐԵՎՈՐ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆ

*Հայաստանի կառավարությունը հրապարակեց առաջիկա հինգ տարիներին արտաքին քաղաքականության առաջնահերթությունները:*

Ծրագրում նշված է, որ Հայաստանի կառավարությունը վարելու է հավասարակշռված եւ հավասարակշռման արտաքին քաղաքականություն, որտեղ ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Իրանի, Ադրբեջանի, Թուրքիայի, Չինաստանի, Եվրամիության, Հնդկաստանի եւ հանգուցային այլ երկրների հետ հարաբերությունների տեսանկյունից առանձնակի ընդգծված է Վրաստանի հետ ռազմավարական գործընկերության ամրապնդման անհրաժեշտությունը:

Ծրագրում նշված է.

*Շարունակվելու է Հայաստանի եւ Վրաստանի միջեւ ռազմավարական գործընկերության հաստատման մասին հռչակագրի հետեւողական իրագործումը, որը ստեղծում է քաղաքական, առեւտրատնտեսական, էներգետիկ, տրանսպորտային համագործակցության զարգացման, տարածաշրջանային եւ համատեղ ենթակառուցվածքային ծրագրերի փոխշահավետ նոր հնարավորություններ:*

**ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ**

## ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

*Օգոստոսի 21-ին Վրաստանի պետական անվտանգության ծառայության ղեկավար Գեկա Գելաձեն հանդիպում ունեցավ պաշտոնական այցով Թբիլիսիում գտնվող Հայաստանի արտաքին հետախուզության ծառայության պետ Քրիստինե Գրիգորյանին:*

Հանդիպմանը կողմերը խոսեցին Վրաստանի եւ Հայաստանի միջեւ առկա բարեկամական սերտ հարաբերությունների եւ դրանց խորացման հեռանկարների մասին, ընդգծեցին միջազգային անվտանգության առջեւ ծառացած մարտահրավերների հաղթահարման գործընթացում երկու երկրների հետախուզության եւ անվտանգության կառույցների միջեւ կառուցողական երկխոսության եւ սերտ համագործակցության նշանակության մասին:

**ՍԱՄՑԽԵ - ՋԱՎԱԽԵԹԻ**

## ՄԱՄՈՒԿԱ ՄԴԻՆԱՐԱՁԵՆ ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻՆ ԵՎ ՍԱԿՐԵԲՈՒԼՈՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ԻՈՍԵԲ ԱԼԻԲԵԳԱՇՎԻԼԻԻՆ

Վրաստանի փոխվարչապետ, տարածաշրջանային զարգացման նախարար Մամուկա Մդինարաձեն, Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջան կատարած աշխատանքային այցի շրջանակում, հանդիպումներ ունեցավ նահանգապետարանի աշխատակազմի, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների հետ եւ նրանց ներկայացրեց երկրամասի նոր պետական լիազոր՝ Իոսեբ Ալիբեգաշվիլիին:

Հանդիպմանը քննարկվեցին տարածաշրջանի զարգացման համար իրականացված եւ նախատեսված միջոցառումները:

**ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ**

# ԻՐԱԿԼԻ ԿՈԲԱԽԻՁԵ. «ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒՄ ԵՆ, ԲԱՐԵԿԱՄՆԵՐ ԵՆ, ԵՐԲ ԴԱ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է ԻՐԵՆՑ ՇԱՀԵՐԻՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ժեշտ համարում քննարկել պետական շահերը, Վրաստանի առջեւ ծառացած մարտահրավերները եւ այն որոշումները, որոնք որոշել եւ կորոշեն մեր երկրի ճակատագիրը՝ հաշվի առնելով պատմական եւ ներկա իրողությունները,- նշեց վարչապետը՝ հավելելով, որ պետությունները փորձում են հարաբերություններ հաստատել միմյանց հետ՝ իրենց շահերն առաջ քաշելու եւ ամրապնդելու համար:

- Երբեմն դա տեղի է ունենում համագործակցության տեսքով, երբեմն՝ ուժով՝ քաղաքական, տնտեսական կամ այլ ձեւերով: Սա միջազգային հարաբերությունների հիմնարար սկզբունքներից մեկն է, բացառություններ չունեցող բանաձեւ, որը գործել է պետությունների գոյության ողջ պատմության ընթացքում: Հետեւաբար, անկախ նրանից, դա մեզ դուր է գալիս, թե՝ ոչ, մենք պետք է հաշտվենք այս իրականության հետ եւ միջազգային քաղաքականությանը նայենք առանց պատրանքների, քանի որ պետությունները բարեկամանում, համագործակցում եւ գործընկերանում են այնտեղ եւ այն ժամանակ, երբ դա համապատասխանում է իրենց շահերին,- ընդգծեց վարչապետը:

# «ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ ՍՏԱՑԱՆ ՆՈՐ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ՝ ԻՆՉՊԵՍ ԱԲԽԱԶԻԱՆ ՀԱՆՁՆԵԼ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ»

***Օգոստոսի 17-ին «Ֆորմուլա» հեռուստաեթերով Աբխազիայի եւ Ղարաբաղի իրադարձությունների միջեւ չհիմնավորված համեմատության դիրքերից հանդես եկող ընդդիմադիր դաշինքի ղեկավարներից մեկի՝ Նիկա Գվարամիայի հայտարարությունն արժանի ու արդարացի քննադատության արժանացավ:***

Վրացական հանրությանն առանձնակի զայրացրեց Ն.Գվարամիայի պնդումը, որ ինքը հիացած է Փաշինյանով, քանի որ նա կարողացավ հաղթահարել հոգեկան ցնցումները եւ հանձնեց Ղարաբաղը:

- Ճիշտ է, եղավ պատերազմ, սակայն, վերջին հաշվով, Հայաստանն ասաց, որ Ղարաբաղը վերցրեք,- ասաց Ն.Գվարամիան եւ հավելեց, որ ազգի համար մեծ նշանակություն ունի պատմական հիշողությունը, թեպետ ցավալի հիշողությունը լուրջ վտանգ է պարունակում:

Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն, արձագանքելով Ն.Գվարամիայի՝ «Ֆորմուլայի» հեռուստաեթերով արտահայտած կարծիքին, նշեց, որ գործակալները ստացել են նոր առաջադրանք եւ դրա իրականացման արշավն են սկսել, թե ինչպես է Վրաստանը Աբխազիան հանձնելու Ռուսաստանի Դաշնությանը:

- Օտարերկրյա գործակալներն ունեն իրենց խնդիրը՝ խոչընդոտել վստահության վերականգնմանը, իսկ «Վրացական երազանքը» ունի իր խնդիրը՝ նպաստել վստահության վերականգնմանը,- ասաց վարչապետը եւ հիշեցրեց, որ վերջին օրերին ռազմագերիների գնդակահարության վերաբերյալ Գիա Բարամիձեի կողմից բարձրաձայնած կարծիքը լրիվությամբ համապատասխանում է Ն.Գվարամիայի արտահայտությանը:

- Նրանց խնդիրն է ինչ-որ կերպ խոչընդոտել վրացիների ու աբխազների միջեւ վստահության վերականգնմանը: Նրանք զայրանում են, երբ տեսնում են, որ կոնկրետ քայլեր են արվում այդ ուղղությամբ,- ընդգծեց վարչապետը:

Իրակլի Կոբախիձեն հիշեցրեց, որ մի քանի ամիս առաջ, թեման բարձրաձայնել էր նաեւ մեկ այլ օտարերկրյա գործակալ՝ Դավիթ Բերձենիշվիլին, որի հավաստմամբ՝ Հայաստանն ընդունել էր իմաստուն որոշում եւ ազատվեց պատմական հիշողությունից:

- Պետությունն ունի հստակ քաղաքականություն: Մենք հաստատել ենք մեր քաղաքականությունն այդ ուղղությամբ, ընդունել ենք համապատասխան օրենսդրություն: Այն նախատեսում է կոնկրետ քայլեր, այդ թվում՝ Աբխազիայում ապրող բնակիչների համար օգտավետ քայլեր, ինչը, վերջին հաշվով, կնպաստի վրացիների ու աբխազների միջեւ վստահության վերականգնմանը,- հայտարարեց Իրակլի Կոբախիձեն:

**ԷԿՈՆՈՄԻԿԱ**

# 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐՆ ԱՎԵԼԱՑԵԼ ԵՆ 19 ՏՈԿՈՍՈՎ ՈՒ ՀԱՍԵԼ 1,9 ՄԻԼԻԱՐԴ ԴՈԼԱՐԻ

***Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման փոխնախարար Վախթանգ Ցինցաձեի հավաստմամբ, Վրաստանն առաջատարներից մեկն է համեմատելի երկրների շարքում՝ համախառն ներքին արտադրանքի նկատմամբ օտարերկրյա ուղղակի ներդրումների մակարդակի առումով, թարմացված տվյալների համաձայն՝ Վրաստանում օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալը 2025 թվականին կազմել է 1 միլիարդ 900 միլիոն ԱՄՆ դոլար:***

- Վրաստանի ազգային վիճակագրության ծառայությունը վերանայել է օտարերկրյա ուղղակի ներդրումների ցուցանիշները: Վերանայման արդյունքում՝ 2025 թվականին օտարերկրյա ուղղակի ներդրումները, նախորդ տարվա համեմատ, աճել են ավելի քան 19%-ով, եւ ներդրումների ծավալը գերազանցել է 1 միլիարդ 900 միլիոն ԱՄՆ դոլարը: Հատկանշական է, որ Վրաստանն առաջատարներից մեկն է համախառն ներքին արդյունքի նկատմամբ օտարերկրյա ուղղակի ներդրումների մակարդակի առումով՝ համեմատելի երկրների համեմատ, եւ 2025 թվականի ցուցանիշը կազմում է 5%,- նշեց փոխնախարարն ու հավելեց, որ խոշոր ենթակառուցվածքային նախագծերի իրականացումը մտել է ակտիվ փուլ, ինչը նշանակում է երկրում լրացուցիչ նոր օտարերկրյա ուղղակի ներդրումներ:

- Մեր նպատակն է պահպանել երկրում գրավիչ ներդրումային եւ գործարար միջավայր՝ երկրում ինչպես տեղական, այնպես էլ՝ արտասահմանյան ներդրումների առումով բարձր ակտիվություն ապահովելու համար: Ապահովել նաեւ՝ բարձր տնտեսական աճի պահպանումը, որը, վերջին հաշվով, կնպաստի երկրում լրացուցիչ նոր աշխատատեղերի ստեղծմանը,- հայտարարեց Վախթանգ Ցինցաձեն:

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

# ՄԱԿ-Ի ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԱՋԱԿՑՈՒՄ Է ՎՐԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Հայտարարության մեջ վճռականորեն աջակցվում է Վրաստանի անկախությանը, ինքնիշխանությանը եւ տարածքային ամբողջականությանը՝ նրա միջազգայնորեն ճանաչված սահմաններում:

Երկրները ողջունել են Նաուրուի Հանրապետության որոշումը՝ «Աբխազիայի Հանրապետության» եւ «Հարավային Օսեթիայի Հանրապետության» անկախ պետություններ ճանաչումը հետ կանչելու եւ նրանց հետ դիվանագիտական հարաբերությունները խզելու մասին:

Հայտարարության մասնակիցները եւս մեկ անգամ կոչ են անում Ռուսաստանին՝ լիովին կատարել 2008 թվականի կրակի դադարեցման համաձայնագրով ստանձնած պարտավորությունները եւ անհապաղ դուրս բերել իր զորքերը Վրաստանի տարածքից: Նրանք նաեւ կոչ են անում Ռուսաստանին՝ հետ կանչել Վրաստանի երկու շրջանների անկախության ճանաչումը, չխոչընդոտել տեղում անվտանգության միջազգային մեխանիզմների ստեղծմանը եւ թույլատրել միջազգային մարդու իրավունքների պաշտպան եւ հումանիտար կազմակերպությունների մուտքը երկու շրջաններ:

Վերջում երկրներն ընդգծում են ռուս-վրացական հակամարտության խաղաղ կարգավորման անհրաժեշտությունը միջազգային իրավունքի, այդ թվում՝ ՄԱԿ-ի կանոնադրության եւ Հելսինկյան եզրափակիչ ակտի հիման վրա»,- նշված է տեղեկատվության մեջ:

**ԵՎՐՈՊԱ**

### ՈՒԺԵՂ ՇՈԳԻՑ ԶՈՀԵՐԻ ԹԻՎՆ ԱՃՈՒՄ Է

*Ընթացիկ ամռանը ռեկորդային շոգերին Ֆրանսիայում զոհ է գնացել առնվազն 7 300 մարդ՝ տեղեկությունը տարածում է «Ֆիգարո» պարբերականը:*

*Սամուլի տեղեկացմամբ՝ բարձր ջերմաստիճանին հարյուրավոր մարդիկ են զոհ գնացել նաեւ Եվրոպայի այլ երկրներում:*

*Ռոբերտ Կոխի ինստիտուտի տվյալներով, այս տարի ուժեղ շոգերի պատճառով Գերմանիայում մահացել է գրեթե 10 000 մարդ:*

*Բելգիայի հանրային առողջապահության ինստիտուտի (Sciensano) տվյալներով, հունիսյան շոգի ալիքի ընթացքում եւ հուլիսի առաջին օրերին արձանագրվել է մահվան ավելի քան 2 000 դեպք:*

**ԱՄՆ**

### ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ ՀԱՍԵԼ Է ՌԵԿՈՐԴԱՅԻՆ 40 ՏՐԻԼԻՈՆ ԴՈԼԱՐԻ

*ԱՄՆ պետական պարտքն առաջին անգամ գերազանցել է 40 տրիլիոն դոլարը, հայտարարել է երկրի Ֆինանսների նախարարությունը: Հինգ ամիս առաջ՝ մարտին, պետական պարտքը հասել էր 39 տրիլիոն դոլարի, իսկ դրանից եւս հինգ ամիս առաջ՝ հոկտեմբերին, այն կազմում էր 38 տրիլիոն դոլար:*

*Դաշնային ծախսերի մեծ մասը կազմում են պաշտպանական ծախսերը, սոցիալական ծրագրերը եւ աճող դեֆիցիտի տոկոսագումարները:*

*Փորձագետները նշում են, որ այս ռեկորդային պարտքն արդեն ազդում է ամերիկացիների գրպանների վրա՝ բարձրացնելով հիփոթեքային վարկերի եւ, օրինակ, ավտոմեքենաների վարկավորման ծախսերը, իջեցնելով այն բիզնեսների կողմից վճարվող աշխատավարձերը, որոնք ավելի քիչ գումար ունեն ներդրումներ կատարելու համար, եւ բարձրացնելով ապրանքների եւ ծառայությունների գները:*

*ԱՄՆ պետական պարտքն առաջին անգամ 1 տրիլիոն դոլարի էր հասել 1981 թվականին:*

**ՌՈՒՍԱՍՏԱՆ - ՈՒԿՐԱԻՆԱ**

### ԿԱՅԱՑԱՎ ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ

*Ռուսաստանը եւ Ուկրաինան ռազմագերիների փոխանակում են կատարել «103-ը՝ 103-ի դիմաց» ձեւաչափով:*

*Ռուսաստանն ուկրաինական գերությունից վերադարձրել է 103 զինծառայողի եւ Կիեւին վերադարձրել նույն թվով ռազմագերիների:*

*Գերիների նախորդ փոխանակումը տեղի է ունեցել հունիսի 26-ին՝ «160-ը՝ 160-ի դիմաց» ձեւաչափով:*

### ՓՈԽԱԴԱՐՁ ՀՐԹԻՌԱԿՈԾՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

*Ռուսաստանը ենթարկվել է ԱԹՍ-ների զանգվածային հարձակման. 620 անօդաչու արձակվել է Մոսկվայի ուղղությամբ:*

*Ըստ իր հաշվարկների՝ վերջին երկու տարվա ընթացքում սա Մոսկվայի ուղղությամբ ամենախոշոր հարձակումն է՝ տուժել է երեք մարդ, այդ թվում՝ 10-ամյա աղջիկ: Անօդաչուներից մեկը հարվածել է Wildberries-ի պահեստին:*

*Նշվում է, որ անցած շաբաթվա ընթացքում ուկրաինական հարվածներից օրական 10 մարդ զոհվել է, շուրջ 60-ը՝ վիրավորվել: Ընդհանուր առմամբ, օգոստոսի 10-16-ը զոհվել է 69 մարդ, այդ թվում՝ 3 երեխա: Եվս 406 քաղաքացիական անձ վիրավորվել է:*

*Ռուսաստանի լայնածավալ հարձակումից հետո՝ Կիեւը օգոստոսի 21-ը հայտարարել է սգո օր:*

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

## ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻ. ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԸ ՀԱՆԴԻՊԵՑ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ՀԵՏ

*Օգոստոսի 20-ին Սամցխե-Ջավախեթիի երկրամասի նորանշանակ պետական լիազոր Իոսեբ Ալիբեգաշվիլին աշխատանքային հանդիպում ունեցավ երկրամասի մունիցիպալիտետների քաղաքապետերի եւ սակրեբուլոյի նախագահների հետ: Հանդիպմանը քննարկվեցին մունիցիպալիտետների երկարաժամկետ զարգացման հարցեր, սոցիալ-տնտեսական ուղղություններ, նաեւ ընթացիկ եւ ծրագրված ենթակառույցային նախագծեր:*

*Հանդիպմանը, որին մասնակցեցին Ախալքալաքի, Նինոծմինդայի մունիցիպալիտետների քաղաքապետեր՝ Մելքոն Մակարյանն ու Անի Մոսոյանը, սակրեբուլոյի նախագահներ՝ Ռուբեն Պալյանն ու Վահան Արոյանը ուշադրությունը բեւեռվեց առկա մարտահրավերների կարգավորման ուղիների վրա:*

## ԱԽԱԼՔԱԼԱՔԻ. ԽԱՆԴՈՆ ԿՈՒՆԵՆԱ ՆՈՐ ՄԱՐԶԱԴԱՀԼԻՃ

*Ախալքալաքի մունիցիպալիտետի փոխքաղաքապետ Թեյմուրազ Մճեդլիձեն, քաղաքապետարանի ենթակառույցների ծառայության պետ Արա Մովսիսյանը եւ վերահսկողության ծառայության պետ Արթուր Դավթյանը ծանոթացել են Խանդո գյուղում մարզադահլիճի ընթացող շինարարական աշխատանքներին:*

*Ենթակառուցային նախագիծը նպատակ ունի աջակցել մունիցիպալիտետում առողջ ապրելակերպի ձեւավորմանը:*

*Շենքը ընդգրկում է մարզադահլիճ եւ այլ անհրաժեշտ տարածքներ, որոնք համապատասխանում են ժամանակակից չափանիշներին:*

*Դահլիճի կառուցումը պլանավորվել եւ իրականացվում է բնակչության, հիմնականում երիտասարդության շահերը հաշվի առնելով:*

*Նախագծի արժեքը կազմում է 271 598 լարի եւ ամբողջությամբ ֆինանսավորվում է տեղական բյուջեից:*

## ՆԻՆՈԾՄԻՆԴԱ. ՓՈԿԱՆ ՆՇԵՑ ԳՅՈՒՂԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՏԱՐԵԼԻՑԸ

*Օգոստոսի 15-ին Վրաստանի խորհրդարանի անդամներ Սամվել Մանուկյանն ու Սմբատ Կյուրեղյանը, Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետ Անի Մոսոյանը եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ Վահան Արոյանը Փոկա գյուղում մասնակցեցին գյուղի օրվան նվիրված հանդիսավոր միջոցառմանը:*

*Տոնական ծրագիրը ընդգրկում էր բազմազան մշակութային եւ երաժշտական համարներ:*

*Փոկայի օրը գյուղի համար կարեւոր ավանդույթ է, որը տեղի բնակչությանը միավորում է տարբեր սերունդների ներկայացուցիչների հետ եւ ներկայացնում գյուղի մշակութային ավանդույթներն ու ինքնատիպությունը:*

*Նշենք, որ օգոստոսի 18-ին Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետ Անի Մոսոյանը եւ սակրեբուլոյի նախագահ Վահան Արոյանը Փոկա գյուղում մասնակցեցին Հերոսի օրվան նվիրված կրթամշակութային միջոցառմանը:*

*Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետարանի մշակույթի ծառայության կողմից կազմակերպված միջոցառմանը մասնակցեցին Զուրաբ Ժվանիայի անվան պետական կառավարման դպրոցի աշակերտները, ովքեր հանդիսատեսին ներկայացրեցին թեմատիկ աշխատանքներ եւ շնորհանդեսներ:*

## ԱԽԱԼՑԻԽԵ. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

*Ախալցիխեի մունիցիպալիտետի քաղաքապետ Վառլամ Ծիկլաուրին, փոխքաղաքապետ Ռուբեն Կարապետյանը հանդիպում ունեցան մունիցիպալիտետի վարչական միավորների ներկայացուցիչների հետ:*

*Հանդիպմանը քաղաքապետին մանրամասն տեղեկատվություն ներկայացվեց Ախալցիխե քաղաքում եւ գյուղերում առկա հիմնախնդիրների վերաբերյալ:*

*Հանդիպմանը քննարկվեցին նաեւ մունիցիպալիտետի բնակավայրերում իրականացվող եւ ծրագրված ենթակառույցային նախագծերը:*

## ՄԱՌՆԵՈՒԼԻ. ԱՌԱՆՁՆԱԿԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԳՅՈՒՂՄԹԵՐՔՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ

*Վրաստանի բնապահպանության եւ գյուղատնտեսության նախարար Դավիթ Սոնղուլաշվիլին, Քվեմո Քարթլիի երկրամասի պետական լիազոր Իլիա Ջալաղանիան, Մառնեուլիի մունիցիպալիտետի քաղաքապետ Դաուր Իսմայիլովը եւ սակրեբուլոյի նախագահ Ամիրան Գիորգաձեն այցելեցին Մառնեուլիի պարենային գործարան եւ ծանոթացան գյուղմթերքների վերամշակման գործընթացին:*

*Նախարարը երկրամասի եւ մունիցիպալիտետի ղեկավարների հետ եղավ նաեւ Մառնեուլիում գործող «Լոմթագորա» ընկերությունում, որը նույնպես զբաղվում է գյուղմթերքների վերամշակմամբ:*

*Պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ*

---

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

## ԽԻՍՏ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ՝ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱՊՕՐԻՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

შემოსავლების სამსახური

***Ընթացիկ տարվա անցած յոթ ամիսների տվյալներով, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային մոնիթորինգի դեպարտամենտի աշխատակիցները, երկրի տարածքով անցկացրած վերահսկիչ գործողությունների արդյունքում, բացահայտել են հարկային օրենսդրության խախտման 11828 դեպք:***

Մասնավորապես բացահայտվել է վերահսկիչ գանձարկղային սարքի չօգտագործման 4739, հարկատուի գրանցման կարգի խախտման 106, հարկային մարմնի իրավասու անձին դիմակայելու 3, անձի կողմից հարկային օրենսգրքում նախատեսված պարտավորությունների անտեսման փաստեր, ինչը նախատեսում է պատասխանատվություն, թեպետ տուգանքի չափը չի սահմանված՝ 5747, առանց ապրանքագրի ապրանքի փոխադրման, առանց ապրանքագրի գնորդին ապրանքի հանձնման, առանց ապրանքագրի գնորդի կողմից գործարքի մերժման 1233 դեպք:

## ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ԽՈՇՈՐ ՔԱՆԱԿԻ ԹՄՐԱՆՅՈՒԹ

Параферин
Paraferin

***Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային աշխատակիցները, «Կարմիր կամուրջ» սահմանային անցակետում, ներքին գործերի նախարարության կենտրոնական քրեական ոստիկանության աշխատակիցների հետ համատեղ գործողության արդյունքում, հայտնաբերել են խոշոր քանակությամբ թմրանյութ:***

Վրաստանի քաղաքացու ուղեբեռի խուզարկության արդյունքում հայտնաբերվել է 240 պարկուճ թմրանյութ պարունակող «Պարաֆերին»: Հետագա արձագանքման համար գործի նյութերը փոխանցվել են Վրաստանի ներքին գործերի նախարարությանը:

## ԿԱՆԽՎԵՑ ՀՐԱԶԵՆԻ ԵՎ ԶԻՆԱՄԹԵՐՔԻ ՆԵՐԿՐՄԱՆ ՓԱՍՏԸ

შემოსავლების სამსახური
გამოვლენილი ცეცხლსასროლი იარაღი და საბრძოლო ვაზნები

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային աշխատակիցները, «Սարփի» սահմանային անցակետում օտարերկրյա քաղաքացիների ավտոմեքենաների խուզարկության արդյունքում, հայտնաբերել են հրազեն, փամփուշտների երկու տուփ եւ 98 մարտական փամփուշտներ:

Օրինախախտում թույլ տված երեք քաղաքացիների գործի նյութեր, հետագա արձագանքման համար, փոխանցվել են ներքին գործերի նախարարությանը:

***Ֆինանսների նախարարության եկամուտների ծառայություն***

ՀՐԱՏԱՊ

# ՆԱՎԹԱՄԹԵՐՔԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՆՈՒՅՆՊԵՍ ԲԵՆԶԻՆՆ ՈՒ ԴԻԶԵԼԸ ԹԱՆԿԱՆՈՒՄ ԵՆ

*Համաշխարհային շուկայում նավթամթերքի գնի տատանումները՝ կապված Հորմուզի նեղուցում ստեղծված իրավիճակի հետ, ավելանում կամ նվազում է, սակայն Վրաստանում նավթամթերքի գների առումով, փաստորեն, փոփոխություն չկա: Բենզինի գինը բավական բարձր է եւ միտումն այնպիսին է, որ նշանակալի փոփոխություն այդ առումով չի ծրագրվում:*

Փորձագետների գնահատմամբ, դրա պատճառներից մեկը նավթամթերքի շուկայում առկա անորոշությունն է: Չնայած նրան, որ, վերջին շաբաթների ընթացքում, Պարսից ծոցից արտահանած նավթամթերքը բավական լրացրեց նավթամթերքի գլոբալ պաշարը, առաջին պլան մղվեց նավթամթերքի վերամշակման հիմնախնդիրը՝ նավթամշակման գործարաններն աշխատում են սահմանափակ աշխատակարգով, ինչը կարող է հանգեցնել վառելանյութի մատակարարման ճգնաժամի:

Պարսից ծոցում ռազմական գործողությունների ծավալումը, բնականաբար, բավական դժվարացնում է Մերձավոր Արեւելքում նավթամթերքի վերամշակման գործընթացին: Այսօրվա դրությամբ, տարածաշրջանն ունի առօրյա 11,7 միլիոն բարելլ նավթամթերք վերամշակելու ներուժ, թեպետ առկա ենթակառույցների լիարժեք գործարկումն անիմաստ է դառնում, եթե հիմնախնդրային է պատրաստի վառելանյութի արտահանումը:

Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա համաշխարհային մասշտաբով նավթի վերամշակման նշանակալի նվազումն անմիջականորեն առնչվում է Ռուսաստանին: Մինչեւ Ուկրաինայի հետ պատերազմական գործողությունների սկսելը, Ռուսաստանը առօրյա արտահանում էր 800 հազար բարելլ դիզելային վառելանյութ, ինչը կազմում էր դիզելային վառելանյութի համաշխարհային արտահանման մասշտաբով 12 տոկոսը: Ստեղծված ճգնաժամային իրավիճակում, Ռուսաստանը, որը աշխարհում մազութ արտահանող խոշորագույն երկիրն է երկրորդը՝ ԱՄՆ-ից հետո դիզելային վառելանյութի հաշվարկում, փաստորեն, դադարեցրեց արտահանումը: Ստեղծված իրավիճակում, անկախ նրանից, թե ինչ քանակության նավթամթերք կարդյունահանվի, բենզինի եւ դիզելային վառելանյութի պահանջարկը դեռ երկար ժամանակ կմնա բարձր մակարդակի:

- Ինչ վերաբերում է Վրաստանին, ապա, երկրում հիմնականում շրջանառության մեջ է Եվրոպայից ներկրած վառելանյութը, եւ, առնվազն երեք ամիս, այսօրվա դրությամբ, գործող սպառողական գները նշանակալի տատանումներ չեն ունենա: Ներկա դրությամբ, բենզինի եւ դիզելային վառելանյութի պակասորդ կամ սպառողական գների աճ, ամենայն հավանականությամբ, չի նախատեսվում: Միակ երկիրը, որը նավթամթերքի արտահանման եւ իրացման առումով որոշակի բարդություններ ունի՝ դա Ռուսաստանն է,- մեզ հետ զրույցում հայտարարեց էկոնոմիկայի փորձագետ **Նիկա Շենգելիան**:

Նման կարծիքի է նաեւ նավթամթերք ներկրողների միության նախագահի **Վախթանգ Իոբաշվիլին**: Նա գտնում է, որ Մերձավոր Արեւելքում առկա ռազմական դիմակայությունը լուրջ հիմնախնդիրներ չի ստեղծի Վրաստանի համար վառելանյութով ապահովելու գործում:

- Մենք երբեք վառելանյութը չենք ներկրել Մերձավոր Արեւելքից, միշտ կողմնորոշվել ենք եվրոպական երկրների ուղղությամբ: Եթե եվրոպական երկրները կարողանան ներկրել եւ վերամշակել անհրաժեշտ քանակությամբ նավթամթերքը, որն անհրաժեշտ է մշտական օգտագործման համար, ապա, այդ դեպքում ոչ մի հիմնախնդիր չենք ունենա,- մեզ հետ զրույցում ասաց Վախթանգ Իոբաշվիլին եւ հավելեց, որ, ներկա դրությամբ, դժվար է հստակորեն ասել, թե Ռուսաստանում նավթավերամշակման գրեթե ողջ հատվածի կանգնեցման դեպքում, ինչ քանակության նավթամթերք կարտահանվի միջազգային շուկա:

- Նման պայմաններում Վրաստանը պետք է գործի՝ ելնելով իր շահերից: Բաթումիում, Փոթիում, Ղուլեւում ունենք նավթային տերմինալներ եւ դրանց աշխատանքը պետք է հստակորեն իրականացնել: Նման բարդ պայմաններում դրական կարելի է համարել այն հանգամանքը, որ Թուրքմենստանը հայտնեց Եվրոպայի հետ համագործակցության ցանկություն եւ առաջարկում է մայրցամաք արտահանել որոշակի քանակության նավթամթերք Վրաստանի տարանցումով, ինչը մեզ համար բավական շահութաբեր է,- մեզ հետ զրույցում ասաց Վախթանգ Իոբաշվիլին:

Հիշեցնենք, որ, ներկա դրությամբ, ըստ որակավորման, մեկ տոննա բենզինի արժեքը կազմում է 1060 ԱՄՆ դոլար, իսկ մեկ տոննա դիզելային վառելանյութի արժեքը հասնում է 1165 ԱՄՆ դոլարի: Վերոնշյալը մոտավորապես այն նշագիծն է, երբ համաշխարհային շուկայում նավթամթերքի գինը տատանվում է 110 ԱՄՆ դոլարի շրջանակում:

Ներկա դրությամբ, միջազգային շուկայում, նավթի թանկացման ֆոնին, Վրաստանում վառելիքի գինը կրկին աճում է: Վերջին մեկ շաբաթվա ընթացքում բենզինի եւ դիզելի գինն աճել է եւս 4-15 թեթրիով:

Հունիսին ԱՄՆ-Իրան հարաբերությունների կարգավորմամբ եւ, համապատասխանաբար, միջազգային շուկայում նավթի գնի կայունացմամբ, Վրաստանում գործող ավտոլցակայաններում վառելիքն էժանացավ, թեպետ վերջին շաբաթներին, Մերձավոր Արեւելքում իրավիճակի սրման ֆոնին, միջազգային բորսաներում նավթը կրկին թանկանում է, եւ երկրի բրենդային ավտոլցակայանները հուլիսի սկզբից սկսել են գնային փոփոխություններն աճի ուղղությամբ: Մասնավորապես, ավտոլցակայանների ցանցերում վառելիքի գինը 6-16 թեթրիով եւ վաճառվող բինզինի մեկ լիտրի գինը, ելնելով օկտանային մակարդակից, տատանվում է 4,27-4,65, իսկ դիզելայինը՝ 4,23-4,28 լարիի սահմաններում:

***ՅՈՒՐԻ ԽՈՒՐԵՆՅԱՆ***

PSP
ԱՐԵՎԻՑ ՔԵՍ
ԹԱՔՆՎԻ
ՕԳՏԱԳՈՐԾԻ՛Ր ԱՐԵՎԱՊԱՇՏՊԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ
CAUDALIE
SVR
MAVIENNE
INSTITUT ESTHEDERM
sebamed
Pharmaceris
MARTI DERM
Lirene
COSRX
11 VILLAGE FACTORY
ziaja
A'pieu
MIZON
ma:nyo
MISSHA
ROUND LAB
algologie
YVES ROCHER FRANCE
PAYOT
GAMARDE
KAYPRO
BIODROGA
DERMAFIRM